Սուրզի աւանը (Խունդուրնա – Խանդաւարի, Զիրմա – Սուրմի, Էլիյադինիա – Էլիդարայի, Խուռնուկու – Փուռնակի կողքին)[1], որը համադրելի է Զանգեմար օժանդակի ափին, Բարուն գիւղի մօտ գտնուող **Ծործո**րի վանքի անուան հետ[2]: Ի դէպ, հնարաւոր է, որ նոյն «Ծործոր» տեղանունն է նշուած Պեւտինգերեան քարտէզի Արտաշատ – Խոյ ճանապարհահատուածում (Անտեբա – Խանդաւարի կողքին)՝ աղճատուած Սոր**ւէ** (Sorvae) ձեւով (վերականգնելի՝ Սոր**զէ** կամ Սոր**սէ**, հմմ. **Ծործ**որ)[3]:

Այսպիսով, Աւարայրի դաշտը պէտք է փնտրել միմիայն այս՝ բազմիցս վկայուած հին մայրուղու վրայ (անկախ այլ, սակայն մեծ բանակների ու փղերի համար անյարմար ուղիների գոյութիւնից), այսինքն՝ Մակուի գետի հիմնական օժանդակի ափերին, Ղըրմըզիդաշ-Զալդրան գիւղից մինչեւ Ծործորի վանք միջակայքում[4]: Ցաւօք, նախկինում մեր պատմաաշխարհագէտները (Ս. Երեմեան, Թ. Յակոբեան, Բ. Յարութիւնեան եւն) կարող էին փնտրել լոկ խորհրդային զինուորական 5-կիլոմետրանոց մասշտաբով քարտէզում (արտերկրի խոշոր մասշտաբով պլանշետները խիստ գաղտնի էին): Բայց 3 տարի առաջ համացանցում, բարեբախտաբար, դրուեցին մեր հարեւան տարածաշրջանների 2-կիլոմետրանոց (1:200000) մասշտաբով զինուորական քարտէզներ: Եւ ահա, դրանց մի պլանշետում (2k-j38-09)՝ 4-5 կմ Ս. Թադէի վանքից իջնող արահետով հիւսիս-արեւմուտք[5], Զանգեմար օժանդակի աջ, արեւելեան ափին նշուած է **Աբարաբաշի** գիւղակը (Մակու քաղաքից ուղիղ գծով՝ 22 կմ հարաւ, Ղըրմըզիդաշ-Զալդրան գիւղից՝ 6-7 կմ հիւսիս-արեւելք, ծովի մակերեւոյթից՝ 1720 մ բարձրութեան վրայ)[6]: «Գուգլում» այն նոր անուն ունի՝ Էմամղոլի-Օլլա, որը, գուցէ, զուգորդել են 2 կմ հիւսիս նոյն ափին գտնուող Էմամղոլի-Բալա գիւղակի հետ (սա նշուած է

---

[1] Thureau-Dangin 1912, 38-39; Дьяконов 1951, 328; Mayer 1984, 92-93.

[2] Տե՛ս Յակոբեան 2017: Ի դէպ, Ծործորը **Զուրզուա** անուանաձեւով (*var.* Զուրզու**ր**ա) ծանօթ էր դեռ Պտղոմէոսին. տե՛ս Ptol. 2006, 552, 553 (V, 13, 16). Հմմ. Hewsen 1982, 140; Հարությունյան 1988, հ^{մր} 4, 56; Арутюнян 2015, 256). Ծործորի վանքի մասին մանրամասն տե՛ս Հախնազարյան 2012, 187-205:

[3] Մանանդյան 1936, 153-156 (=Մանանդյան 1966, 177-180, 184):

[4] Պարսկաստանի Արեւմտեան Ատրպատական նահանգի Մակու գաւառի Զալդրան, «Զարդերուն (Զալդորան, Զհալ-Դերուն)» գաւառակի՝ մահալի մասին տե՛ս Հախնազարյան 2012, 24:

[5] Դա՝ ուղիղ գծով, իսկ ասֆալտէ երթուղիներով պէտք է մեծ՝ շուրջ 33-կիլոմետրանոց պտոյտ կատարել:

[6] Աբարաբաշի գիւղը նշուած է նաեւ վերջերս «Անուշաւան Բարսեղեան» ԱՁ-ի հրատարակած մեծադիր, կաւճապատ, 1:220000 մասշտաբով, «Հայաստանի Հանրապետություն եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» վերնագրով քարտէզում: